Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԿՑ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 6. Կոտայքի մարզ– ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.2024-30.09.2024թթ. |
| Ներկայացման օր | 07.10.2024 |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Հասմիկ Մանուկյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- լվացքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման** շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 41 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 1 դեպքի վարում՝ նոր անձնագրի ձեռք բերում, 23 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
- **Իրավաբանական խորհրդատվության** շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- **Կազմակերպվել է շահառուների ժամանցը՝** մանր եւ խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 4 խմբակ՝ առողջ ապրելակերպ և առողջական ֆիզկուլտուրա, զարգացնող խաղեր, տիկնիկագործություն, հոգեւոր խմբակ, որին մասնակցել է 39 շահառու:
  Կազմակերպվել է թվով 9 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 38 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝ էքսկուրսիա դեպի Դիլիջան-Հաղարծին-Գոշավանք, «Պահանջվում է ստախոս» ներկայացման դիտում, Հրազդանի 65 ամյակին նվիրված միջոցառում, ծննդյան տոների նշում 2 անգամ, «Շաբաթօրյակ», «Խաղող օրհնեք»,այց Հրազդանի քաղաքային զբոսայգի, «Ընտանեկան գրադարանավար» ծրագրի շրջանակներում միջոցառում:
- **Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում** իրականացվել է արվեստի, խաղային, հոգեբանական, ինտելեկտուալ 15 թերապեվտիկ պարապմունքներ, որոնց մասնակցել է 25 շահառու:
- **Սննդի տրամադրման շրջանակներում** յուրաքանչյուր օր կենտրոնում սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- **Լվացքի տրամադրման ծառայությունից** օգտվել է 1 շահառու :

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.
Միջոցառումներ՝ էքսկուրսիա, այց դրամատիկական թատրոն, Հրազդանի 65ամյակ, շաբաթօրյակ, միջոցառում՝ «Ընտանեկան գրադարանավար» ծրագրի շրջանակներում:

(տե՛ս հետևյալ հղմամբ՝https://rb.gy/eag4lq, https://shorturl.at/pqrfU, https://shorturl.at/mFKLf, https://shorturl.at/XEUGr, https://shorturl.at/T6amP, https://shorturl.at/LVCY3, https://shorturl.at/3mVoq ), թերապիաներ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/lyYn6, https://shorturl.at/w0bnq, https://shorturl.at/x9ggU, https://shorturl.at/YnIxZ, https://shorturl.at/ChNKG, https://rb.gy/92ctir, https://shorturl.at/6NXTP, https://shorturl.at/d1Jg2, https://shorturl.at/BDt2P ):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- լվացքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ծրագրի նպատակին հասնելու համար աշխատակազմի հմտությունները զարգացնելու, աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով ցերեկային կենտրոնի պատասխանատուի կողմից կազմակերպվել են թիմային քննարկումներ և դեպքերի ուսումնասիրություններ:
Կենտրոնի պատասխանատուն մասնակցել է ՄՍԾՏԿ-ի գործող 3 համակարգող խորհրդի նիստերին եւ հոգաբարձուների 4 նիստերին:
Մասնակցել է ՄՍԾՏԿ-ի կողմից կազմակերպված «Աշխատանքի տոնավաճառ» միջոցառմանը:
Ողջ աշխատակազմը մասնակցել է ՄԱԿ-ի կողմից կազմակերպված «Առաջին հոգեբանական օգնություն» թեմայով դասընթացի:
Թիմային ոգին ամրապնդման նպատակով աշխատակազմը մասնակցել է նաեւ կազմակերպության կողմից «Աղվերանում» կազմակերպված «թիմ բիլդինգ» միջոցառմանը:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 40/41 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 27 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 1 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 1 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 1 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 40 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 39 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 40 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 25 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 41 |
| 5. 1 | Առողջ ապրելակերպ և առողջական ֆիզկուլտուրա | 29 |
| 5. 2 | Զարգացնող խաղեր | 13 |
| 5.3 | Տիկնիկագործություն | 10 |
| 5.4 | Հոգևոր խմբակ | 17 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 38 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 12 |
| 7. | Այլ ծառայություն (նշել) լվացքի ծառայություն | 1 |

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Ե. Մխիթարյան «07»10.2024թ